ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2016 թվականի N:245-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԿԱՐՄԻՐԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016

թվականի ապրիլի 14-ի N01/07.2/3732-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրավանի համայնքի ղեկավարի 2016 թվականի մայիսի 16-ի N5 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կարմրավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի մարտի 3-ի նիստի թիվ 5 և 2016 թվականի հունիսի 21-ի նիստի թիվ 9 արձանագրությունները, ծնողական խորհրդի 2016 թվականի մարտի 4-ի նիստի թիվ 4 արձանագրությունը և Գագիկ Եղիազարյանի 2016 թվականի ապրիլի 15-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կարմրավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Արամ Թորոսյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Գառնիկ Սիմոնյանի լիազորությունները,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրավան համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Արտավազդ Առաքելյանի լիազորությունները,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամ Գայանե Իվանգուլովայի, Էլիզա Սարգսյանի լիազորությունները,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամ Արմինե Կոդոշյանի լիազորությունները:

2. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2015 թվականի դեկտեմբերի 9-ին Խորհրդի կազմում հաստատված Գագիկ Եղիազարյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի:

3. Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2013 թվականի նոյեմբերի 8-ին Խորհրդի կազմում հաստատված Ալինա Կարապետյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի նոյեմբերի 8-ը:

4. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Հովհաննես Երվանդյանին,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Գառնիկ Սիմոնյանին, Սարգիս Խաչատրյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրավան համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արտավազդ Առաքելյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Թամարա Վարդանյանին, Նելլի Ավագյանին,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Անահիտ Բաբոյանին:

5. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N128 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հունիսի «23» N248.4 որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԿԱՐՄՐԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Երվանդյան Հովհաննես	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Սիմոնյան Գառնիկ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Խաչատրյան Սարգիս	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Առաքելյան Արտավազդ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Վարդանյան Թամարա	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Ավագյան Նելլի	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Կարապետյան Ալինա	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Բաբոյան Անահիտ	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան

Իսկականի հետ ճիշտ է: